ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04-ը նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեպչյան,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո:

05.11.2019թ., ժամը 12:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Կահույքի վերանորոգման և պահպանման»** ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/h	Մասնակցի անվանում
1.	«Դառես» ՍՊԸ-ի հետ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին),

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Ծառայության անվանումը	Պլանավորած նախահաշվային միավորի գին ՀՀ դրամ	«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի առաջարկած գին /ՀՀ դրամ/	
			առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ այդ թվում՝		450,085	450,085	450,085
1.	(Գրասենյակային գույք և կահույք, զինվորական և հոսպիտալային մահճակալներ)			

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում է /ճիշտ է/:

3.3 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար «**Կահույքի վերանորոգման և պահպանման**» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը **05.11.2019թ.-ին** որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով **11.11.2019թ. ժամը 09:50-ի՝** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած և բավարար գնահատված մասնակցի հետ անցկացնել բանակցություն և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին էլեկտրոնային ձևով ծանուցեց նշված բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

11.11.2019թ. ժամը 09:50-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված **«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն** չներկայացավ և իր կողմից առաջարկված գինը մնաց առանց փոփոխության:

Ըստ ներկայացված տվյալների **«ԴԱՌԵՍ» ՍՊԸ** –ն ԱԱՀ չի վճարում:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **12.11.2019թ.** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **«Դառես ՍՊԸ-ն»:**

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/3» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան